ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին, կիրակի օրը, Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի շրջանավարտ չորս շնորհալի սարկավագների քահանայական ձեռնադրությունը, ձեռամբ տ. Տիրան արքեպ. Ներսոյանի:

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի է ունենում նորընծաների կոչման արարողությունը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Հնչում է «Նայեաց ի մեզ» շարականը, բացվում են ավանդատան դռները և եկեղեցական թափորով դեպի Իշման ս. սեղան է առաջնորդվում ձեռնադրող տ. Տիրան արքեպ. Ներսոյանը: Նրան հետևում են չորս նորընծա սարկավագները: Ձեռնադրող սրբազանը բազմում է Իշման ս. սեղանի առջև դրված աթոռին:

Սկսվում է «Կոչումն քահանայութեան յերեկոյէ» արարողության կարգը: Խարտավիլակության պաշտոնը կատարում է տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը, որը և, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, խոսելու հրաման ստանալով, ասում է.

«Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես զՂազարոս, զԿարպիս, զԿտրին, զՇավարշ սարկաւագունսս զոր ընծայէ քեզ, յաստիճան քահանայութեան»:

Այնուհետև հրապարակայնորեն քննվում է նորընծաների հոգևոր, իմացական պատրաստության հարցը: Քննությունից հետո նորընծաները հանդիսավոր հայտարարությամբ հանձն են առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Ապա տեղի է ունենում նորընծաների ուղղափառ դավանության քննությունը:

Նորընծաները միաբերան ասում են. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ հայրապետսն»: Եվ խոստանում են աշակերտել և հետևել եկեղեցու բոլոր ուղղափառ և աստվածաբան հայրապետներին ու վարդապետներին՝ Բարսեղ Կեսարացուն, Հովհան Ոսկեբերանին, Գրիգոր Աստվածաբանին, Գրիգոր Լուսավորչին, Հովհան Օձնեցուն, Հովհան Որոտնեցուն, Գրիգոր Տաթևացուն և բազում այլ հայ և օտար աստվածաբաններին:

Արարողության ավարտին նորընծաները հրապարակային կերպով տալիս են իրենց «հաւատոյ խոստովանութիւն»-ը, ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի (Մաշտոց Ձեռնադրութեան, Վաղարշապատ, 1876, էջ 36—37):

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Կիրակի օրը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, և կատարվում է «Կանոն ձեռնադրութեան քահանայի» արարողության կարգը:

Առավոտյան ժամը 11-ին սկսվում է ս.

պատարագը և շարունակվում մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» մաղթանքը: Վեհաշուք հնչում է «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականը:

Նորընծաները ծնկաչոք ձախակողմյան աստիճաններով բարձրանում են Ավագ խորան և, հավատացյալների խուռներամ բազմությանը դառնալով, բարձրացնում են իրենց ձեռքերը, ի նշան աշխարհից հրաժարման, դառնալու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն»:

Մայր տաճարի կամարների տակ հանդիսավոր ու հաղթական հնչում է «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականը:

Հավատացյալ ժողովուրդը հոգեպես միաձուլվելով այս արարողությանը, համոզումով ու գոհունակությամբ ասում է. «Արժանի են»:

Այնուհետև նորընծաները բոլորվում են ձեռնադրող տ. Տիրան արքեպ. Ներսոյանի շուրջը, որն իր ձեռքը խաչաձև դրած յուրաքանչյուրի վրա, արտասանում է ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղոթս արարէք. զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև ձեռնադրող սրբազանը «ձեռամբն քերէ զուրարն զպարանոցաւն ի ձախմէ ի յաջ» և ասում է. «Առ զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի լուծ նորա քաղցր է, և բեռն նորա փոքրոգի»:

Ընթերցվում է ս. Գրքից օրվա ընթերցվածքը և միաբերան աւլվում «Հաւատամք»-ը: Եվ ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց», որից հետո աղոթքով ու սրբությամբ նորընծաները ստանում են քահանայական փիլոնը և պատարագի զգեստները:

Հանդիսավոր արարողությունը հասնում է իր լրումին, հոգևոր վերացման սրբազան բարձունքին, երբ ձեռնադրող արքեպիսկոպոսը քահանայական լրիվ զգեստավորման մեջ կանգնած չորս նորընծաների ճակատն ու ձեռքերը օծում է ս. մյուռոնով ու նրանց վերանվանում հոգևորականի նոր անուններով:

Այսպես. Ղազարոս սրկ. Կյուրեղյանը վերանվանվում է տ. Տիրան աբեղա, Կարապետ սրկ. Գալստյանը՝ տ. Բագրատ, Կտրիճ սրկ. Ներսիսյանը՝ տ. Գարեգին, իսկ Ծավարշ սրկ. Աշուրյանը՝ տ. Գուրգեն քահանա:

Այնուհետև տ. Տիրան արքեպ. Ներսոյանը նորընծաներին է տալիս «զսկիհն և զմաղզմայն», որպես պատարագ մատուցելու իշխանության նշանակ, և, դառնալով ժողովրդին, նորընծաները տալիս են իրենց առաջին քահանայական օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա պատարագիչ սրբազանը բովանդակալից ու խրատական շնորհավորական քարոզով դիմում է նորընծաներին, նրանց ցանկանալով հավատք, կորով, կարողություն՝ փառավորելու համար իրենց սրբազան կոչումը՝ ի պայծառություն մեր ս. եկեղեցու:

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է մինչև հավարտ:

Ս. պատարագից հետո նոր ձեռնադրված քահանաները, զգեստավորված, շարվում են Ավագ խորանի առջև: Վեհափառ Հայրապետը ողջագուրվում է նրանց հետ՝ համբուրում նրանց ճակատն ու տալիս Իր օրհնությունը: Նորընծաներին շնորհավորում են նաև Մայր Աթոռի միաբանները:

ՎԵՂԱՐԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 15-ին, կիրակի օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում են «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգերը:

Տ. Տիրան, տ. Բագրատ և տ. Գարեգին նորընծաները օրհնությամբ և աղոթքով ստանում են վեղար:

Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը հանում է յուչաքանչյուր նորընծայի գլխից «ջրբուն»-ը (գդակ)՝ այն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով, ասելով. «Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք: Աստուած զգեցուսցէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ...»:

Արարողության ավարտին չորս նորընծաները տ. Տիրան աբեղ. Ներսոյանի առաջնորդությամբ ներկայանում են Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբությունը սիրով ու գոհունակությամբ է ընդունում Իր հոգևոր զավակներին, որոնք ուխտ են արել իրենց ողջ կյանքը նվիրել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու պայծառացման և Մայր Աթոռի ու հոգևոր սպասավորության սրբազան գործին:

Նորին Սրբությունը տալիս է Իր հայրական օրհնությունը նորընծաներին՝ մաղթելով հաջողություն իրենց առաքելական գործունեության ճանապարհի վրա, լինելու «Մշակք առանց ամօթոյ»:

*
* *

Տ. Տիրան աբեղա Կյուրեղյան. ավազանի անունով՝ Ղազարոս: Ծնվել է 1948 թվականին Կիպրոսի Նիկոզիա քաղաքում: Նախ-

նական կրթությունը ստացել է տեղի Մելիքյան-Ուզունյան ազգային վարժարանում:

1962 թ. ընտանիքով ներգաղթել է մայր հայրենիք և բնակություն հաստատել Կիրովական քաղաքում: Ուսումը շարունակել է տեղի միջնակարգ դպրոցում:

1964 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1968 թվականին, ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

Հոգևոր ճեմարանը ավարտել է 1969—70 ուս. տարում: Իր ավարտաճառի նյութն է եղել «Տարոնի սրբավայրերը»:

1971 թվականի հոկտեմբերից մինչև 1972 թվականի հուլիս ամիսը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հրավերով պաշտոնավարել է Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում:

1972 թվականի հոկտեմբերի 15-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. Բագրատ աբեղա Գալստյան. ավազանի անունով՝ Կարպիս: Ծնվել է 1947 թվականին Էջմիածնում:

1962 թվականին, միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո, ընդունվել է հոգևոր ճեմարան և այն ավարտել 1969—70 ուս. տարում: Ավարտաճառի նյութն է «Հայ եկեղեցու հարաբերությունը ռուս եկեղեցու հետ»:

Սարկավագ է ձեռնադրվել 1969 թվականի դեկտեմբերի 25-ին: 1970—71 ուս. տարում սովորել է Զագորսկում, ռուսական հոգևոր ճեմարանում: Այնուհետև ծառայել է Ռոստովի հայոց եկեղեցում որպես սարկավագ:

1972 թվականի հոկտեմբերի 15-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. Գարեգին աբեղա Ներսիսյան. ավազանի անունով՝ Կտրին: Ծնվել է 1951 թվականին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1965—66 ուս. տարում ընդունվել է հոգևոր ճեմարան:

Ձեռնադրվել է սարկավագ 1970 թվականին, ս. Ստեփանոսի տոնին:

Հոգևոր ճեմարանն ավարտել է 1970—71 ուս. տարում: Ավարտաճառի նյութն է «Եղիշե արքեպ. Դուրյանի կյանքն ու գործունեությունը»:

Այնուհետև մեկ տարի պաշտոնավարել է հոգևոր ճեմարանում որպես վերակացու:

1972 թվականի հոկտեմբերի 15-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. Գուրգեն քահանա Աշուրյան. ավազանի անունով՝ Շավարշ: Ծնվել է 1938 թվականին Պարսկաստանի Սույթանաբադի շրջանի Փրչստան գյուղում:

1946 թվականին ծնողների հետ հայրենադարձել է մայր հայրենիք և բնակություն հաստատել Արտաշատի շրջանի Բերքանուշ գյուղում:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1955 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Սարկավագ է ձեռնադրվել 1967 թվականին:

1972 թվականի հոկտեմբերի 15-ին ձեռնադրվել է քահանա:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը այս ուրախ առիթով շնորհավորում է նորընծաներին, ցանկանում նրանց հաջողություն՝ իրենց պաշտոնի ու ծառայության մեջ՝ ի պայծառություն Մայր Աթոռի և մեր եկեղեցու, ի միսիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ՊԵՏՐՈՍՅԱՆ